28.08.2026թ. ՆՀ/2176-26

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի
գլխավոր քարտուղար
Կ. Մարգարյանին

# ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2026 թվականի օգոստոսի 28-ի «Արթուր Արտուշի Նահապետյանին Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղելու մասին» № 213-Ա հրամանը՝ հայտնում եմ, որ արտասահմանյան գործուղումների համար համապատասխան տնտեսագիտական դասակարգման հոդվածով չկան բավարար ֆինանսական միջոցներ: Միաժամանակ հայտնում եմ, որ կատարված ֆինանսական վերլուծության արդյունքում պարզվեց, որ Այգեձոր 67-2, 67/5 մասնաշենքի էներգետիկ ծառայությունների համար նախատեսված ֆինանսական միջոցներից մինչև տարեվերջ խնայողության արդյունքում կառաջանան ազատ միջոցներ, որոնք հնարավոր է նպատակաուղղել վերոնշված արտասահմանյան գործուղումների գծով ծախսերի հատուցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-ԷԷ-26/03 ծածկագրով կնքված էներգետիկ ծառայությունների մատուցման պայմանագրի գումարը նվազեցնել 1,000.0 հազ. դրամով և կատարել ներքին հոդվածային վերաբաշխում նշված գումարի չափով՝ նվազեցնելով «4212-Էներգետիկ ծառայություններ» հոդվածից՝ ավելացնելով «4222-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» հոդվածին:

Հարգանքով՝
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսաբյուջետային և
հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝
28.08.2026

X

Подписано: BABAYAN GAYANE 7208620300

Գ. Բաբայան